

## ՆԱԽԱՀԱՅԵՐՆԵՒ ԸՈՒՈՎԱԿԱՆ ՎԵՐՋԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՏՐԵԳԵՐԻԿ ԿՈՐՏԼԵՆԻՏ  
(Նիդեռլանդներ, Լայդենի համալսարան)

### 1. Ներածություն:

Հայերենի ուշագրավ գծերից մեկը ՆՇԾ հոլովային տարբերությունների ճշգրիտ պահպանումն է՝ շնայած վերջավորությունների հնչույթային ձևավորման մեծ փոփոխություններին: Այս իմաստով Հայկական ՍՍՀ դասական լեզուն նույնիսկ ավելի հին է, քան լիտվերենը, լեհերենը և ռուսերենը, որոնք բոլորից լավ են պահպանել ՆՇԾ հոլովական ձևերը: Ի տարբերություն այս լեզուների՝ հայերենը ենթարկվել էր բառավերջի վանկերի ընդհանուր կրճատման (apocope. այսուհետև՝ վանկատում, վանկասղում իմաստով. — թարգմ.): Հոլովային գործառությունների զարմանալի պահպանումը պատմական լեզվում թելադրում է, որ նախնական համակարգը մնացել էր էականորեն անփոփոխ մինչև այն շրջանը, որը անմիջապես նախորդել է վանկատմանը: Այս հոդվածում ես մտադիր եմ քննել հոլովական վերջավորությունների ձևը այդ փուլում:

Ներկա ուսումնասիրության ժամանակագրական հեռանկարը ուրվագծված էր Ֆիլադելֆիայի հայերենագիտական կոնֆերանսին տրված իմ նպաստում<sup>1</sup>: Ստորև բերվող փուլերի համարները համապատասխանում են այնտեղ տրված ժամանակագրությանը: \*Լ-ի ծագումը \*ս-ից թվագրվում է 5-րդ փուլին, նոր շփականների ծագումը՝ որպես փափկացման արդյունք՝ 10-րդ փուլին, միջձայնային և նախաբաղաձայնային շփականների կորուստը՝ 13-րդ փուլին, վանկարար հնչեղների կորուստը՝ 14-րդ փուլին, վանկատումը՝ 16-րդ փուլին, շփականների կարճեցումը պայթականների՝ 19-րդ փուլին, և բառամիջի ձայնավորի կամ մի քանի հնչյունների կրճատումը (syncope)՝ 22-րդ փուլին: \*Օ-ի անցումը ու-ի ընդային բաղաձայնից առաջ, \*Օ-ի զարգացումը ու-ի, և ոչ վանկարար վերջնային ընդայինների կորուստը նախորդել են 10-րդ փուլին:

### 2. Հայցական:

Նզ. հայց. վերջավորության նախավանկատումային ձևն էր \*ի-ն՝ ի- հիմքերում, \*ու-ն՝ ու և օ- հիմքերում, \*ա-ն՝ ա- հիմքերում, և \*աև-ը բաղաձայն հիմքերում: Վերջին վերջավորությունը առաջացել է վերադրական ձայնավորի հավելումից՝ հետբաղաձայնային \*ն-ից առաջ, 14-րդ փուլում: Նախնական հետձայնավորային \*ն-ն ակներևաբար դարձել է նախորդող ձայնավորի մի գիծ և հետագայում կորսվել է 10-րդ փուլից առաջ: Ոչ մի ապացույց չկա Գողելի այն տեսակետի օգտին, թե վերջնային ընդայինը պահպանվել էր ն- հիմքերի

<sup>1</sup> Հայերենագիտական սոաջին միջազգային համաժողովում կարդացված զեկուցում: Անգլերենից թարգմ. Գ. Ա. Պապոյան:

<sup>1</sup> Proceedings (Delmar, 1980), 97 106.

եզ. ուղղ. ձևում՝ նշն \*եե \*-ում և \*օե-ում<sup>2</sup>; Ինչպես Պեդերսենն է վճռականորեն ապացուցել, ն- հիմքերի եզ. ուղղ. հայց. ձևը ներկայացնում է նախնական հայցականը, և ոչ թե ուղղականը<sup>3</sup>; նախնական ուղղականը պահպանված էր երէց-ում և մարդիկ-ում: Եզ. ուղղ. ձևի ընդհանրացումը ի-հիմքերում և եզ. հայց. ձևի՝ ն-հիմքերում՝ հետևանք է շեղոք սեռի հետ ձուլման, որը պահպանել է նշն \*մե-ի վերջնային ռեզայինը հնչյունական օրենքների համաձայն և կրթք չի ունեցել վերջնային ռեզային Ե-հիմքերում, օր. աղբյուր, օր, հուր:

Հոգն. հայց. վերջավորութային նախավանկատումային ձևը հավանաբար եղել է \*-իս՝ ի-հիմքերում, \*-ուս՝ ու և օ-հիմքերում, և \*-աս՝ ա- և բաղաձայն հիմքերում: Հնարավոր չէ որոշել, թե արդյոք շեղոքները միացե՞լ էին վերջին տիպին այս փուլում:

### 3. Ուղղակաճ:

Ինչպես Պեդերսենն է մանրամասնորեն ցույց տվել, հայկական հոգն. ուղղ. -f վերջավորությունը նշն հետձայնադին \*-S-ի հնչյունական արտացոլումն է՝ Իմ ժամանակագրության մեջ վերջնային \*S-ն դարձել է \*h-5-րդ փուլում, այնուհետև իս՝ 11-րդ փուլում, և վերջապես \*-f 19-րդ փուլում: Սա պրոբլեմ է ստեղծում իգ. և ար. ի-, ու- և օ-հիմքերի եզ. ուղղ. ձևում, որը չի վերջանում Բ-ով: Վերջավորությունը ակնհայտորեն շնչվել է մի քանի ձևաբանական ազդակների միացյալ ճնշման տակ: Մի կողմից, վերջնային բաղաձայնը բնորոշում էր ա-, ն-, և Ե-հիմքերի հոգն. ուղղ. վերջավորությունները, որոնք ունեին զրո վերջավորություն՝ համապատասխան եզակի ձևում, Մյուս կողմից, ար. և իգ. եզ. հայց. ձևը նույնանման էր շեղոք սեռի եզ. ուղղ. հայց. ձևի հետ ի-, ու- և օ-հիմքերում: Ինչպես որ ն- և Ե- հիմքերի դեպքում, եզ. ուղղ. և հայց. ձևերի միջև տարբերության վերացումը հետևանք է քերականական սեռի վերացման<sup>5</sup>: Նման զարգացումը կարող է համեմատվել օ-հիմքերի եզ. ուղղ.-ի՝ եզ. հայց.-ով փոխարինվելու հետ սլավոններենում, որտեղ բարիտոն շեղոքները ձուլվել են արականներին: Հայերենում փոխարինման պատճառակությունը ուժեղացված էր ա-հիմքերի եզ. ուղղ. և հայց. ձևերի ձուլմամբ՝ որպես ոչ վանկարար վերջնային ռեզայինների կորստի հետևանք: Մի երրորդ ազդակ կարող էր լինել \*սո ցուցական դերանվան զրո վերջավորությունը, որը պետք է որ պահպանված լիներ, որովհետև նա ծառայել է որպես օրինակ վկայված ցուցական և հարցական դերանունների համար, օր. նոյն, ով:

Գլխավոր առարկությունը, որ կարող է արվել այստեղ պաշտպանվող տեսակետի դեմ՝ որոշչային ածականի հոգն. ուղղ.-ի զրո վերջավորությունն է<sup>6</sup>: Այս առարկությունը հեշտորեն հերքվում է այն ենթադրությամբ, որ ածականը ուներ դերանվանական վերջավորություններ, ինչպես որ գերմանականում, օր. գոթերեն blindai «կույր», հմմտ. dagos «օրեր»: Վանկատումը առաջացրեց վկայված վերջավորությունները: Կարծում եմ, որ նշն եզ. ուղղ. \*-S վերջավորությունից ք-ի առաջացման տեսակետի օգտին հավելյալ վկայություն կա հայերենի հոգնակի թվի զարմանալի առատության մեջ, որի աղբյուրը պետք է հավանաբար որոնել բայական գոյականներում, ինչպիսիք են խոսի, ելի:

<sup>2</sup> An Introduction to the Study of Classical Armenian (Wiesbaden, 1975), 100f.

<sup>3</sup> KZ 38 (1905), 216f.

<sup>4</sup> KZ 38 (1905), 209—227.

<sup>5</sup> Cf. Ch. de Lamberterie, BSL 74 (1979), 327.

<sup>6</sup> Cf. A. Meillet, MSL 11 (1900), 382 and 17 (1911), 9.

Այսպիսով, ես հասնում եմ նախավանկատումային վերջավորությունների հետևյալ վերականգնմանը: Եզ. ուղղ. վերջավորությունը \*-ի էր i-հիմքերում, \*-ու՝ օ, u- և ար. ու իգ. ո-հիմքերում, \*-ա՝ a-հիմքերում, և \*-օ որոշ դերանվանական ձևերում: Հոգնակի ուղղ. վերջավորությունը \*-ուխ էր u- և օ-հիմքերում, \*-ախ՝ a-հիմքերում, \*-եխ՝ բաղաձայն հիմքերում և, հավանաբար, i-հիմքերում, և \*-ե ածականում (տե՛ս ստորև):

#### 4. Սեռակիս:

Հնդիրանականի և հունարենի պես, հայերենը ընդունել է դերանվանական եզ. սեռ. \*OSYO վերջավորությունը անվանական օ-հիմքերում: Սա կարող էր լինել մի բարբառային հնդեվրոպական նորաբանություն: Վերջնային -S-ի բացակայությունը այս վերջավորությունից, իմ կարծիքով, կաղապար կազմեց i-հիմքերում \*-IOS, u-հիմքերում՝ \*-UOS, և բաղաձայն հիմքերում՝ \*-OS վերջավորություններից վերջնային բաղաձայնի նմանատիպ շնջման համար: Ա-հիմքերի -ի վերջավորությունը ամենայն հավանականությամբ ներկայացնում է նշծ \*-iHos-ը<sup>7</sup>: Իա-հիմքերը ըստ երևույթին ընդունել են իո-հիմքերի վերջավորությունը արդեն վանկատումից առաջ՝ որպեսզի վերացվի ի- և ա-հիմքերի հետ համանունությունը: \*-yos վերջավորությունը ակներևաբար պահպանված է գիւղ-ի գեղջ ձևում և տիւի տարեջեան ձևում (երկրորդական -եան-ով): Կիև-ի կնոջ ձևը, հավանաբար, նույն վերջավորությամբ եզ. սեռ. կիևո-ի նախավանկատումային ծավալումն է: Հետաքրքիր է, թե արդյոք մի-ի եզ. սեռ. միոյ և միոջ ձևերի համակեցությունը ավելի վաղ սեռային տարբերակման մեացորդ է՝ -օյ-ը և օջ-ը ներկայացնելով համապատասխանաբար ար. և իգ. վերջավորությունները: Այս ըմբռնմամբ, վերջնային -ջ-ի ծայրագույն աղբյուրը ի- հիմքի բառակազմական նախաձայնային \*-y ձևն էր, որը հաճախադեպ էր իգական գոյականներում: Այսպիսով, ես հասնում եմ եզ. սեռ.-ի վերջավորության նախավանկատումային ձևի հետևյալ վերականգնմանը. \*-ոյո՝ օ-հիմքերում, \*-իոյո՝ իո- և իա-հիմքերում, \*-ի(յ)ո՝ ի- և ա- հիմքերում, \*-ուտ կամ \*-ույո՝ ու-հիմքերում, և \*-ո՝ բաղաձայն հիմքերում:

Հոգն. սեռ. -ց վերջավորությունը ներկայացնում է նշծ \*-skom-ը, որի նախավանկատումային ձայնավորությունը պահպանված է նոյն-ի նոցուն ձևվում<sup>8</sup>: նույն ձայնավորը գտնում ենք ու-ի սեռ. ուրուլ ձևում, որը պետք է որ \*-րու-ից սերի: Այսպես, ես վերականգնում եմ \*-ցու-ն որպես մինչվանկատումային կանոնավոր վերջավորությունը և \*-րու-ն որոշ դերանվանական ձևերում, օր. մեհ-ի սեռականում՝ մեհ, հմմտ. լատիներեն nostrum:

#### 5. Ներգոյական:

Գլխավոր հիմնահարցը, որ ծագում է եզ. ներգ. ձևերի հետ կապված, հետևյալն է. ինչու՞ է իա-հիմքերի վերջավորությունը տարբերվում է -ա-, օ- և իո- հիմքերի վերջավորություններից: Դա թեքման միակ դասն է, որտեղ եզ. ներգ. վերջավորությունը տարբերվում է և՛ տրականի, և՛ հայցականի վերջավորությունից: Քանի որ նշծ եզ. ներգ.-ի \*i վերջավորությունը անկասկածորեն կձուլվեր եզ. տրակ.-ի \*-ei վերջավորության հետ՝ որպես վանկատման արդյունք, մենք պետք է սկսենք ծավալված զրո վերջավորությունից, որպեսզի բացատրենք իա- հիմքերի եզ. ներգ. ձևը: Արդարև, զրո վերջավորություն կա վերայական եզ. ներգ.՝ vrki-ում, որը համեմատության համար ամենահավա-

<sup>7</sup> Cf. Ch. de Lamberterie, BSL 74 (1979), 328.

<sup>8</sup> Cf. KZ 38 (1905), 237 and Lingua 45 (1978), 295.

նական թեկնածուն է: Պջ վերջավորության սովորական կապը հուն. —othi—ի հետ հանդիպում է Չ ճակատագրական առարկությունների: Առաջին, մեծապես անհավանական է, որ օ—հիմքերի մակբայական ածանցյալը ճշգրիտ կերպով պահպանված լինի իա— հիմքերի հարացույցում: Երկրորդ՝ այդ կապը պահանջում է նոր վերջավորության լրացուցիչ ընդարձակում մի հավելյալ ձայնավորով, որը հետագայում կորսվել է որպես վանկատման արդյունք: Իմ կարծիքով վերջավորությունը ստեղծված էր եզ. սեռ. —ոջ վերջավորության նմանությունամբ, որից և նա հավանաբար տարբերվել է կրճատված ձայնավորով: Եթե իմ ենթադրությունը եզ. սեռ. միոյ և միոջ—ի մասին ճիշտ է, ապա մենք կարող ենք ենթադրել, որ եզ. ներգ. միում և միոջ—ը ցուցադրում են ար. և իգ. դերանվանական վերջավորությունները: Այսպես, ես փորձառական կերպով վերականգնում եմ նախավանկատումային հետևյալ եզ. ներգ. վերջավորությունները. \*—ի(յ)ի՝ ի— և ա— հիմքերում, \*—ու(յ)ի՝ ու— հիմքերում, \*—ե՝ ո— հիմքերում (տե՛ս ստորև), \*—ի՝ բաղաձայն հիմքերում, և վերջապես \*—ումի և \*—ոջի՝ դերանվանական ձևերում: —Ոջի—ի մուծումը անվանական իա— հիմքերի հարացույցի մեջ՝ պետք է որ նախընթաց լիներ եզ. սեռ. \*—օյո վերջավորության ընդհանրացմանը:

Ներգ. հոգն. —ս վերջավորությունը ներկայացնում է նշծ \*—su վերջավորությունը, որը ըստ երևույթին պահպանված էր բաղաձայն հիմքերում ընդհուպ մինչև վանկատումը: Չայնավորից հետո \*ս—ն կորսվել էր և ձայնավորների հաջորդությունը ենթարկվել էր սղման, հմմտ. քոյր \*swesor—ից, հոգն. քորք \*swesores—ից, և բոկ \*bhoso—ից: Քանի որ հիմքի ձայնավորը սղվել էր հոգն. ներգ. ձևում, վերջավորությունը պետք է որ վերականգնված լիներ վանկատումից հետո: Վերջավորության նախավանկատումային ձևը կարող էր լինել \*—ոյու՝ օ—հիմքերում, \*—ու՝ ու—հիմքերում և հավանաբար ի—հիմքերում, թերևս \*—ո՝ \*աու—ից՝ ա—հիմքերում: Հնարավոր է, որ \*—սու վերջավորությունը փոխարինել է \*—ու—ին՝ ի— և ու— հիմքերում արդեն վանկատումից առաջ, բայց այդ դեպքում հիմքի ձայնավորի բացակայությունը՝ հույվական վերջավորությունից առաջ զարմանալի կլիներ:

## 6. Գործիական:

Վերջավորությունները կարող են սերել նշծ \*—bhi—ից, որը ընդունել է մի հավելյալ \*—s հոգնակիում: Նախավանկատումային վերջավորություններն էին եզ. \*—բի և հոգ. \*—բիխ բաղաձայնից հետո, և նույն վերջավորությունները՝ \*բ—ի փոխարեն \*—վ(ս)—ով՝ ձայնավորից հետո: նշծ \*bh—ի բացակայությունը հայտնի հոգն. տրականի և բացառականի վերջավորություններից հզոր նշան է այն բանի, որ այս բաղաձայնը սկզբնապես սահմանափակված էր գործիական հոլովով, որովհետև այսպիսի զանազանիչ հույվական ցուցիչը հազիվ թե ջնջված լիներ մի լեզվում, որը այնքան լավ է պահպանում նշծ հոլովային տարբերությունները: Այս տեսակետը ամրապնդվում է գոթական —ba—ով մակբայներով, որոնք ներկայացնում են ավելի վաղ գործիական ձևեր: նշծ օ— հիմքերի հոգն. գործ. \*ois վերջավորությունը, որը սովորաբար տեղի էր տալիս նախավանկատումային \*—եխ ձևին (տե՛ս ստորև), կարող էր ջնջված լինել ուզած փուլում վանկատումից առաջ կամ հետո:

## 7. Տրական:

Ու—ի տր. ումեֆ ձևը ցույց է տալիս, որ նշծ \*—oi—ը առաջացրել է \*—e վանկատումից առաջ, հմմտ. վեդայական ja'smai: Նույնը կարելի է ենթադրել \*—օյ—ի համար՝ ուրեֆ—ի նկատմամբ, որը ակներևաբար նույն հիմքի ներգ. ձևն

է, ինչպես քէ-ի սեռ. արուէ-ը<sup>9</sup>: Ամենայն հավանականությունը, բոլոր վերջ-  
նաչին ի երկբարբառները ձուլվել են \*-ե-ին մինչ նրանց վանկատվելը: Եթե սա  
ճիշտ է, նախավանկատումային եզ. տրակ. վերջավորությունը \*-ե էր թեքման  
բոլոր դեպքերում: Հավանական չէ, որ վերջնային \*էյ-ը տեղի է տվել \*-ի-ին  
վանկատումից առաջ, որովհետև այդ դեպքում եզ. տր. և ներգ. ձևերը կձուլ-  
վեին թեքման բոլոր ձևերում: Իրավ, ես կարծում եմ, որ \*-օյ-ի և \*-օյ-ի ձու-  
լումը օ-հիմքերում սկիզբ է դրել նմանատիպ եզ. տր. \*oye վերջավորության՝  
տարբերելու համար այն եզ. ներգ. վերջավորությունից:

ՆՆԾ հոգն. տր. վերջավորությունը \*-mus էր գերմանական, բալթիական և  
սլավոնական վկայության համաձայն<sup>10</sup>: Այս վերականգնումը պաշտպանվում  
է հայկական նյութով, որովհետև \*մ-ն կորսված էր \*-ու-ից առաջ այս լեզվում,  
այնպես որ վերջավորության նախավանկատումային ակնկալված ձևը կլիներ  
\*-ույ<sup>11</sup>: Այդ ձևը ակներևաբար փոխարինվել էր հոգն. սեռ. վերջավորությամբ:  
Հնդիրանականում և իտալա-կելտականում դա վերաձևված էր հոգն. գործ.-ի  
վերջավորության հիմքի վրա: Հնաբալոր է, որ հունական դերանունների ն-ին  
հոգն. \*nsme և Ջ-րդ հոգն. \*usme-ն, որոնք վկայվում են էոլիական հայց.  
\*a'mme և u'mme-ում, պետք է որ սերեն տրականի ձևերից, հմմտ. վեդայա-  
կան հայց. asma'n, yusma'n.

#### Ճ. Բացառական:

Ինչպես Պեդերսենն է ցույց տվել, եզ. բացառ. -է վերջավորությունը ծա-  
գել է էնկլիտիկ մասնիկից, գուցե ՆՆԾ \*eti-ից, որը ավելացվել էր եզ. ներգ.  
ձևին վանկատումից հետո՝ որպեսզի վերացվի երկու հոլովական վերջավորու-  
թյունների համանունությունը<sup>12</sup>: Ես եզրակացնում եմ, որ համանունությունը  
վանկատման արդյունք է: օ-հիմքերում՝ ակնկալված նախավանկատումային  
\*-ու վերջավորությունը, որը զարգացել էր ՆՆԾ \*-ծմ-ից, ըստ երևույթին փո-  
խարինվել էր \*-ույու-ով եզ. սեռ. և տր. վերջավորությունների հիմքի վրա:  
Նմանատիպ այս զարգացումը հատկապես լավ էր պատճառարկված, եթե  
թեքման մյուս դասերը ընդունել էին \*-ու վերջավորությունը այդ ժամանակ:  
Այստեղ զարգացրած տեսությունը երկու պատճառներով ավելի գրավիչ է, քան  
այն երկընտրական տեսակետը, որ օ-հիմքերի եզ. բաց. վերջավորությունը  
փոխարինվել էր եզ. սեռ. վերջավորությամբ վանկատումից առաջ: Առաջին,  
պարզ չէր լինի, թե ինչու երկու հոլովները լրիվ չեն ձուլվել, ինչպես հունարե-  
նում և բալթիկ-սլավոնականում, որովհետև նրանք զատորոշված չէին թեքման  
մյուս դասերում: Երկրորդ, բացառականը չի կարող ծագել սեռականից ա- և  
ի-հիմքերում, որտեղ հիմքի ձայնավորը բացակայում է պատմական վերջա-  
վորությունից առաջ, օր. ամ, բան, եզ. սեռ. ամի, բանի, եզ. բաց. ամէ, բանէ,  
եզ. գործ. ամաւ, բանի<sup>13</sup>: Կարծում եմ, որ այստեղ նորից, ինչպես իա-հիմքե-  
րի հարացույցի -ու վերջավորության բացատրության ժամանակ, մենք պետք  
է սկսենք նախավանկատումային եզ. ներգ. \*-ի վերջավորությունից, որը հա-  
մապատասխանում է վեդայական vṛkī-ին: Այս վերջավորությունը ակնհայտ-

<sup>9</sup> Cf. KZ 38 (1905), 235—237.

<sup>10</sup> Հին վերին գերմաներենի tagum-ը պահանջում է \*-mus, և ոչ թե mos, որը կառաջա-  
ներ \*tagam.

<sup>11</sup> Cf. Annual of Armenian Linguistics 2 (1981), 30.

<sup>12</sup> KZ 38 (1905), 221f.

<sup>13</sup> Cf. Godel o. c., 106 top.

րեն ծառայել է որպէս կաղապար եզ. բաց. միավանկ վերջավորութեան ստեղծման համար ա-հիմքերի հարացույցում, հնարավոր է՝ նաև \*ու-ի, որը կորսվել էր վանկատման հետևանքով:

ՆշՆ հոգն. բաց. վերջավորութեան վերականգնումը խնդրական է: Տրականի հետ ձուլումը հնդիրանականում, իտալա-կելտականում ու գերմանականում, և սեռականի հետ՝ բալթիկ-սլավոնականում, հայերենում ու հունարենում հուշում է, որ նախնական հոգն. բաց. վերջավորութիւնը չէր պարունակում ոչ \*-bh-, ոչ -m- և ենթակա էր փոխարինման ավելի զատորոշիչ վերջավորութեամբ: Ես վերականգնում եմ ՆշՆ \*-ios-ը: Գործիականի ազդեցութեան տակ այդ վերջավորութիւնը փոխարինվել էր \*-bhyos-ով՝ հնդիրանականում և \*-bhos-ով իտալա կելտականում, մինչդեռ այն ընդունել է տրականից \*-m-ն՝ գերմանականում: Իմ կարծիքով, հայերենը պահպանել է ՆշՆ \*-ios վերջավորութեան մի զարմանալի հետք դերանվանական 1-ին հոգն. մէջ և 2-րդ հոգն. ձևերում, որտեղ ջ-ն շարունակում է ավելի նախնական \*y-ն: Սրանք միակ ձևերն են հստակ հոգն. բաց. վերջավորութեամբ հայերենում, հմմտ. 1-ին եզ. ինէն, 2-րդ եզ. քէն: Նրանք չեն կարող համեմատվել -ոջ-ով հոլովական ձևերի հետ, որոնք սահմանափակվում են եզակիով: Ինէն ձևը, հնարավոր է, ներկայացնում է ավելի վաղ \*իմէն-ը, որը կարող է նույնացվել զոթական ik-ի (ես) սեռ. meina-ի հետ<sup>14</sup>, Ուստի, հայերենը ներկայացնում է մի կարևոր օղակ ՆշՆ հոգն. բաց. վերջավորութեան վերականգնման մեջ:

## 9. Սեռ:

Մի շարք հեղինակներ նկատել են, որ ՆշՆ սեռային զատորոշման կորուստը հայերենում, կարծես թե, հակասութեան մեջ է հոլովական տարբերութիւնների ճշգրիտ պահպանման հետ: Ինչպես Միչեն է մատնանշել, քերականական սեռի կորուստը իրականում ածականի սեռային համաձայնութեան կորուստն է<sup>15</sup>: Ես վերևում փաստել եմ, որ շեղոքը ձուլվել է արականի հետ վանկատումից առաջ, առնվազն եզակիում: Որոշչային ածականի հոգն. ուղղ. զրո վերջավորութիւնը բխում է արակ. \*ոյ-ից և իզ. \*այ-ից, որոնք միաձուլվել են \*-է-ի վանկատումից առաջ: Ա- և իա- հիմքերը ընդունել են մի շարք հոլովային վերջավորութիւններ ի- և իո- հիմքերից, համապատասխանաբար: Որպես այս զարգացումների արդյունք, քերականական սեռի կարևորութիւնը մեծապես նվազեցված էր արդեն վանկատումից առաջ: Երբ վերջին վանկի ձայնավորը կորսված էր, սեռային զատորոշումը դուրս էր հանված ուղղ. և հայց. ձևերից, և հետագայում մյուս հոլովներից: Ես վերևում այն միտքն եմ արտահայտել, որ ավելի վաղ սեռային զատորոշման մի հետք է պահպանվել մի-ի թեք հոլովներում՝ եզ. սեռ. միոյ, միոջ, եզ. տր. և ներգ. միում, միոջ:

## 10. Ամփոփում:

Ներկայացված նկատառումների հիման վրա ես հասնում եմ նախալականատումային վերջավորութիւնների հետևյալ փորձնական վերականգնմանը.

<sup>14</sup> Cf. KZ 38 (1905), 226.

<sup>15</sup> MSL 11 (1900), 382.

<i>ծգ.</i> <i>ուղղ.</i>	-u, -a, -i, -o, -∅:	<i>հոգի.</i>	-ux, -ax, -ex, -e, -a:
<i>սեռ.</i>	o/i/u(y)o, -o, -(o)jo-ru:		-(o/a/i/u) e <sup>c</sup> u, -ru:
<i>տր.</i>	o/i/u(y)e, -(um)e, -(o)je:		-(o/a/i/u) e <sup>c</sup> u, -u(x):
<i>հայց.</i>	-u, -a, -i, -ap, -∅:		-us, -as, -is, -a:
<i>բաց.</i>	-o/i/u(y)u, -u, -(o)ju:		-(o/a/i/u)c u, -jo(x):
<i>զործ.</i>	-o/a/i/uwi, -bi:		-o/a/i/wuix, -bix:
<i>հերգ.</i>	-e, -i/u(y)i, -(um)i, -(o)ji:		-(oy)u, -o, -su:

**Ф. КОРТЛЕНДТ (Лейден, Нидерланды) — Падежные окончания протоармянского языка.** — Данная работа нидерландского ученого в качестве доклада была прочитана в сентябре 1982 года на состоявшейся в Ереване международной научной конференции по арменоведению. Автор пришел к убедительным выводам относительно периода, предшествующего редукции конечных слогов. Одной из важных особенностей армянского языка он считает сохранение в неизменности падежных различий праиндоевропейского языка, несмотря на большие изменения в фонемном составе окончаний. В этом смысле классический язык Армянской ССР даже более архаичен, чем литовский, польский и русский, в которых лучше всего сохранились падежные формы праиндоевропейского языка. В отличие от этих языков, в армянском конечные слоги подверглись общей редукции. Удивительная устойчивость падежных функций в древнейшем языке подсказывает, что первоначальная система оставалась в основе своей неизменной вплоть до периода, непосредственно предшествующего редукции конечных слогов.